ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն /22 ժամ/ թափուր տեղի համար.

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) մեկ լուսանկար 3Х4 չափի,
3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
4) անձը հաստատող փաստաթուղթ,
5) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
6) ինքնակենսագրություն (Ձև5),
7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 18-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Վանանդ Պարույր Սևակ 6:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 39-40-60 հեռախոսահամարով: